Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի անդամների
ընդհանուր ժողովի արձանագրությունից

2020թվականի փետրվարի 5- ին, ժամը 15-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի անդամների ընդհանուր ժողովը՝ համայնքի ղեկավարի 2019 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության քննարկման վերաբերյալ:

Ընդհանուր ժողովին մասնակցում էր ՀՀ Արմավիրի մարզպետարանի Հողաշինության և Հողօգտագործման բաժնի մարզային պետական տեսչության պետ Ա. Դարբինյանը, համայնքի ավագանու անդամներ, համայնքի թվով 30 բնակիչներ և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Նախագահությամբ Վ. Գրիգորյանի
Քարտուղարությամբ Հ. Մանուկյանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի ղեկավարի 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցող՝ համայնքի ղեկավար Վաչիկ Գրիգորյան/

Արտահայտվեցին՝

Մանուկյան Մեսրոպ - համայնքի անդամ
Գևորգյան Սամվել - ավագանու անդամ
Նիկողոսյան Գուրգեն - համայնքի բնակիչ
Խաչատրյան Անուշավան- համայնքի անդամ
Մանուկյան Մելքոն - համայնքի անդամ
Ավագյան Վաչիկ - ավագանու անդամ
Նազարյան Պավել - համայնքի բնակիչ
Նազարյան Գագիկ - համայնքի բնակիչ

Որոշեցին

1.Հավանություն տալ Ծիածան համայնքի ղեկավարի 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքներին

2.Հանձնարարել համայնքի ղեկավարին և ավագանուն՝ համայնքի անդամների ընդհանուր ժողովում բարձացված հիմնախնդիրներին և առաջարկություններին տալ համապատասխան լուծում:

Իսկականի հետ ճիշտ է

նախագահ Վ. Գրիգորյա
քարտուղար Հ. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան հյուրեր, համագյուղացիներ և ավագանու անդամներ, այսօր Ձեր քննարկմանն եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի համայնքապետարանի և ավագանու կողմից 2019 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին - առանձին , վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի բյուջե՝

Եկամուտներ ընդամենը՝

h/h	Եկամուտներ	2019թ հաստատված	2019թ կատարողականը	կատարողականը առ 01.01. 2020թ. o/o
1	Հողի հարկ	4700.0	4121,5	88
2	Գույքահարկ/ավտո/	3200.0	2894,6	90,4
3	Գույքահարկ /շենք/	380.0	8,7	0.2
4	տեղական տուրքեր	150.0	163.2	108.8
5	տեղական վճարներ	818..0	-	
6	Վարձակալական հողի հարկ	68.9	66,8	97
7	դոտացիա	20.573.8	20.573.3	100
8	Ընդամենը	29.890.7	27.825,1	93,1

Ընդամենը եկամուտներ՝ 29.890.7 հազ. դրամի դիմաց - 27.825.1 հազ. դրամ

2020 թվականի հունվարի 1- ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

1) h/պ աշխատակազմի աշխատավարձ-12.500.01 հազ.դրամի դիմաց -- 11668.4 հազ.դրամ
2. խրախուսանք - 880,0 - 880,0
3. Էլ. ծառայություն - 1200.0 - 1000,4

4. կապի ծառայություն -	230,0	-	210,0
5. գույքի և սարքավորումների վարձակ-	996,0	-	996,0
6. համակարգչային ծառայություն	200,0	-	109,0
7. գրասենյակային նյութեր -	500,0	-	287,3
8.հատուկ նպատակային նյութեր -	410,6	-	164,5
9.տեղեկատվական թերթ	100,0	-	52,8
10.վարչական սարքավորումներ -	1971,1	-	950,0
11.ներկայացուցչական ծախսեր/ պսակ/	200,0	-	
12.ընդհանուր բնույթի այլ -	300,0	-	
01.3.3			
13. համակարգչային ծառայություն -	28,8	-	28,8
01.6.1			
14. համայնքային ասոցացիա	13,5	-	
15.մասնագիտական ծառայություն-	300,0	-	106,0
16. ընթացիկ դրամաշնորհ -	852,0	-	851,4
17. ընդ բնույթի հանրային ծառայութ-	300,0	-	300,0
18. ճանապարհային տնտեսություն-	900,0	-	898,0
04.2.1			
19. գյուղատնտեսություն -	448,8	-	441,6
2.Շրջակա միջավայր			
05.1-1			
20.Աղբահանում -	996.0	-	996,0
06.3-1			
06.4-1			
21. Փողոցների լուսավորություն -	800,0	-	800,0
3. Մշակույթ,			
08.2.3			
21. մ/տ աշխատակազմի աշխատավարձ-	3450,0	-	3233,3
22. խրախուսանք -	255,0	-	254,8
23. ընդհ. բնույթի հանր. ծառայություն -	900,0	-	870,8
4. Հանգիստ և կրոն			
08.2.1			
24. հանգստի և ազատ ժամ, կազմակեր-	800,0	-	800,0
25. գրադարաններ–	80,0	-	
5. Սոցիալական պաշտպանություն			
10.7.1			
26. սոց անապահով անձ, աջակցություն -	1,516,0	-	1,516,0
27.նվիրատվ այլ շահույթ չհետապն,կազ -	150,0	-	
28.Պահուստային ֆոնդ -	580,0		

<u>ընդամենը ծախսեր՝ -29. 890. 7հազ.դրամի դիմաց - 26,464,4 հազ դրամ</u>

2.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է քաղաքացիների ընդունելության օր, որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ:
   2019 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներին տրվել է 146 տեղեկանքներ և 52 գրություններ այլ կազմակերպություններին:
2. Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

3 . ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1.Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն , մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն կատարվել
2. Համայնքում կատարված իրավախախտումների մասին ոստիկանության ներկայացուցչի տրված տեղեկատվության համաձայն որոշ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Աջակցել ենք զորակոչին և ուսումնավարժական հավաքներին:
2 Աջակցել ենք Արցախի պատերազմի մասնակիցների և զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներին:
3.Աջակցել ենք ՔՊ մարմինների գործունեությանը:

5.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Աջակցել ենք սոցիալապես անապահով և հարազատը կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը և տրվել է սոց. օգնություն՝ 17 սոցիալապես անապահով և 10 հարազատը կորցրած ընտանիքներին;

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Բարեկարգվել է գյուղամիջյան և դաշտամիջյան հողային ճանապարհները
2, Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
3. Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ:
4. Կազմակերպվել և ժամանակին վիճակագրական վարչություն է ներկայացվել բնակչության, անասնագլխաքանակի, բերքահավաքի, կերերի կուտակման, գարնանացանի ընթացքի, ստացված համախառն բերքի և միջին բերքատվության մասին ամսական հաշվետվությունները;

7.ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1 .Աշխատում է համայնքի բուժ. կետը
2. Ունենք լավ վերանորոգված մշակույթի տուն՝ համալրված ժամանակակից տեխնիկայով

որտեղ գործում պարի և թատերական խմբակը
3. Մշակույթի տանը տոնական և հիշատակի օրերին կազմակերպվում են միջոցառումներ և անցկացվում ասմունքի հուշ-երեկոներ
4.Գործում է գրադարանը, որը համալրված է համապատասխան համակարգչային սարքավորումներով և հարուստ գրականությամբ:
5.Ակտիվ գործում է թատերական խմբակը և ամեն տարի մասնակցում է ,,Նռան հատիկ,, մանկապատանեկան մրցույթ-փառատոնին և արժանանում պատվոգրերի ու հուշանվերի;
6. կազմակերպել ենք համայնքում բնակվող 80 կենսաթոշակառուների մեկօրյա հանգիստը Սևանա լիճ հանգստյան գոտում անցկացնելու համար նվերներ
7. համայնքի առաջին դասարան հաճախող 12 երեխաներին հատկացվել է պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածուներ
8. Ամանորի կապակցությամբ համայնքի 0-10 տարեկան 230 երեխաներին հատկացվել ամանորյա տոպրակներ;

8.ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում չկա առանձնացված տարածք:
1. Շրջակա միջավայրը մաքուր պահելու համար ամեն տարի բյուջեի ձևավորման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում աղբաթափման աշխատանքների վրա:
2. Համայնքում շաբաթը 1 անգամ կատարվում է աղբաթափման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում՝ 2 անգամ:
3. Բարեկարգվել են գյուղամիջյան փողոցները և դաշտամիջյան ճանապարհները ավազահողային ծածկույթով:
4. Համայնքի ևս 2 փողոցներ անցկացվեց լուսավորություն՝ ԼԵԴ էներգախնայող լուսատուներով;

Ծիածան համայնքում 2020 թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1.Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
2.Ոռոգման ցանցի մասնակի նորոգում:
3. Գյուղ մտնող կենտրոնական փողոցի ասֆալտապատում
4.Գյուղ. մթերքների իրացման հետ կապված խնդիրների լուծում
5. Գյուղամիջյան և դաշտամիջյան հողային ճանապարհների բարեկարգում հողաավազային ծածկույթով;
6. Մեկ արտեզյան հորի հորատում

Համայնքի ղեկավար՝ Վ. Գրիգորյան

Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Մանուկյան